

Հավելված

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2019 թ. փետրվարի 21-ի նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝
Ա. Հ. Սիմոնյան
«21» փետրվարի 2019 թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը սահմանում է Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի (այսուհետ՝ կենտրոն) գործունեության կարգն ու պայմանները:

2. Կենտրոնը ԵՊՀ կրթագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ կանոնադրության ու սույն կանոնադրության հիման վրա:

3. Կենտրոնի պաշտոնական անվանումն է՝

Հայերեն՝ Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն,

Ռուսերեն՝ Центр европейских исследований Ереванского государственного университета,

Անգլերեն՝ Centre for European Studies of Yerevan State University:

4. Կենտրոնի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:

5. Կենտրոնն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ կանոնադրությամբ, ԵՊՀ և կենտրոնի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերով:

6. Կենտրոնը սահմանված կարգով կարող է ունենալ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

7. Կենտրոնը ԵՊՀ գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանումներից մեկն է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն մեկ կամ մի քանի մասնագիտացումներով:

8. Կենտրոնը պատրաստում և հրատարակում է առարկայական ծրագրեր, դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, դասախոսություններ և այլ ուսումնասօժանողակ նյութեր:

9. Կենտրոնն իրականացնում է գիտահետազոտական գործունեություն (ներառյալ՝ միջբուհական և միջազգային համագործակցության շրջանակներում):

10. Կենտրոնն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ ներքին իրավական ակտերին և սույն կանոնադրությանը:

11. Կենտրոնը, ելնելով իր կողմից իրականացվող ուսումնական, մանկավարժական, մեթոդական, գիտական, ուսումնասօժանող և տեխնիկական աշխատանքներից, ըստ սահմանված չափանիշների, կազմում է իր հաստիքացուցակի նախագիծը և ներկայացնում ԵՊՀ ռեկտորին:

12. Միջազգային և հայաստանյան կազմակերպություններից, ԵՊՀ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվով ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ կենտրոնին կարող են հատկացվել ֆինանսական միջոցներ, որոնք կենտրոնը տնօրինում է սահմանված կարգով:

III. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13. Կենտրոնի կառավարումն իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման զուգակցմամբ: Կենտրոնի կառավարման մարմիններն են գիտական խորհուրդը և տնօրենը:

14. Կենտրոնի կառավարման կոլեգիալ մարմինը կենտրոնի գիտական խորհուրդն է, որը կազմված է 16 անդամներից: Գիտական խորհրդի նախագահն ի պաշտոնե կենտրոնի տնօրենն է:

15. Կենտրոնի գիտական խորհուրդը կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի անդամներից: Խորհրդի ի պաշտոնե և հրավիրյալ անդամների թիվը չի կարող գերազանցել խորհրդի կազմի 50 տոկոսը:

16. Կենտրոնի գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են տնօրենը՝ որպես խորհրդի նախագահ, նրա տեղակալ(ներ)ը, մեթոդական խորհրդի նախագահը և արհբյուրոյի նախագահը:

17. Գիտական խորհրդի ընտրովի անդամներն ընտրվում են Կենտրոնի կրթական ծրագրերը սպասարկող ամբիոնների գիտամանկավարժական հիմնական համակազմից:

18. Գիտական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել կենտրոնի գործունեության և մասնագիտությունների հետ կապված արտահամալսարանական ու կենտրոնի աշխատանքներում չընդգրկված այլ մասնագետներ՝ գիտական խորհրդի կազմի մինչև 20 տոկոսի չափով:

19. Գիտական խորհրդի անդամների 25 տոկոսը սովորողներն են, որոնց ընտրությունն իրականացնում է կենտրոնի ուսանողական խորհուրդը:

20. Կենտրոնի գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի լիազորությունների ավարտից մեկ ամիս առաջ կենտրոնի տնօրենը ԵՊՀ ռեկտորի

հաստատմանն է ներկայացնում կենտրոնի գիտական խորհրդի անդամների նոր անվանացանկը:

21. Կենտրոնի գիտական խորհուրդը՝

- 1) ընդունում է կենտրոնի կանոնադրության նախագիծը,
- 2) ընդունում է որոշումներ կենտրոնի կրթական, գիտահետազոտական, միջազգային համագործակցության և այլ հարցերի վերաբերյալ,
- 3) ընտրում է կենտրոնի տնօրեն՝ 5 տարի ժամկետով,
- 4) լսում է կենտրոնի տնօրենի հաշվետվությունը և գնահատում նրանց գործունեությունը,
- 5) ԵՊՀ ռեկտորին ներկայացնում է կենտրոնում կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու, վերակազմավորելու վերաբերյալ առաջարկություններ,
- 6) առաջադրում է ԵՊՀ-ի հոգաբարձուների խորհրդում և ԵՊՀ-ի գիտական խորհրդում կենտրոնի ներկայացուցիչների թեկնածուներին,
- 7) լուծում է կենտրոնի ուսումնական, գիտական աշխատանքների, միջազգային կապերի և այլ գործունեության հետ կապված խնդիրները,
- 8) սահմանված կարգով հաստատման է ներկայացնում կենտրոնի ուսումնական պլանները,
- 9) լուծում է սույն կանոնադրությունից և ԵՊՀ-ի այլ ներքին իրավական ակտերից բխող ու կենտրոնի գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

22. Կենտրոնի գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 8 անգամ: Գիտական խորհրդում որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊՀ-ի կանոնադրությամբ կամ կենտրոնի կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Գիտական խորհրդի որոշումները պարտադիր են կենտրոնի աշխատողների և սովորողների համար:

23. Կենտրոնի գիտական խորհրդի նիստերը վարում է նախագահը: Կենտրոնի տնօրենի հաշվետվության նպատակով հրավիրվող խորհրդի նիստերը վարում է գիտական խորհրդի կազմից ընտրված նախագահողը, որը չեն կարող լինել տնօրենը և նրա տեղակալները: Կենտրոնի խորհրդի նիստի նախագահողը բացում և փակում է նիստը, առաջարկում է նիստի աշխատակարգը, ապահովում է դրա կատարումը, քվեարկության է դնում օրակարգի հարցերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հաշվիչ հանձնաժողովի ընտրությունը:

24. Կենտրոնի տնօրենի տեղակալին և գիտական խորհրդի քարտուղարին գիտական խորհրդի կազմից տնօրենի ներկայացմամբ նշանակում է ԵՊՀ ռեկտորը:

25. Կենտրոնի գիտական խորհրդի նիստն իրավազոր է խորհրդի անդամների ցուցակային կազմի երկու երրորդի ներկայության դեպքում: Քվեակազմի (քվորումի) բացակայության դեպքում հայտարարվում է գիտական խորհրդի նիստի անցկացման նոր ժամանակը՝ նույն օրակարգով:

26. Գիտական խորհրդում գիտամանկավարժական պաշտոնների տեղակալման ընտրության մրցույթների քվեարկությունը կատարվում է փակ, գաղտնի կարգով՝ ԵՊՀ համապատասխան ընթացակարգերի համաձայն:

27. Գիտական խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ԵՊՀ ռեկտորը կամ պրոռեկտորը:

28. Գիտական խորհրդի կողմից տնօրենի ամենամյա հաշվետվությունը լսելու նիստում գիտական խորհուրդը քվեարկությամբ գնահատում է տնօրենի գործունեությունը: Տնօրենի

գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում ԵՊՀ ռեկտորը մեկ շաբաթվա ընթացքում հրավիրում է գիտական խորհրդի նիստ՝ տնօրենին անվստահություն հայտնելու հարցի քննարկման և որոշում ընդունելու համար: Տնօրենին անվստահություն հայտնելու գիտական խորհրդի նիստի ընթացքում ընթացակարգային խախտումներ հայտնաբերելու դեպքում ԵՊՀ ռեկտորը հնգօրյա ժամկետում՝ մինչև պաշտոնանկության նպատակով հրավիրված նիստը, գիտական խորհրդում նշանակում է նոր քվեարկություն:

29. Տնօրենին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում ԵՊՀ ռեկտորը հնգօրյա ժամկետում լուծում է տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

30. Կենտրոնի գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, նիստին մասնակցող անդամների անվանացանկը, օրակարգի հարցերը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունը ճիշտ կազմելու համար: Նիստի օրակարգը և ընդունած որոշումները տասն աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման ԵՊՀ ինտերնետային կայքում:

31. Կենտրոնի գիտական խորհրդում որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդն այլ որոշում չի կայացրել:

32. Կենտրոնի գիտական խորհրդի որոշումները պարտադիր են կենտրոնի աշխատողների և սովորողների համար:

33. Կենտրոնի գործունեությունն իր իրավասության սահմաններում կազմակերպում և ղեկավարում է կենտրոնի տնօրենը:

34. Կենտրոնի տնօրենը՝

1) ղեկավարում է կենտրոնի կրթական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, միջազգային և այլ գործունեությունը,

2) ապահովում է ԵՊՀ-ի կառավարման մարմինների և կենտրոնի գիտական խորհրդի որոշումների կատարումը,

3) ԵՊՀ ռեկտորի հաստատմանն է ներկայացնում տնօրենի տեղակալ(ներ)ի թեկնածությունները,

4) սահմանված կարգով ԵՊՀ ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ սովորողներին հեռացնելու, կամ նրանց ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ,

5) արձակում է հրաման սովորողներին կուրսից կուրս փոխադրելու մասին,

6) պատասխանատվություն է կրում կենտրոնի աշխատանքների որակի, խնդիրների ու գործառույթների պատշաճ կատարման համար,

7) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊՀ և կենտրոնի կանոնադրություններով նախատեսված այլ լիազորություններ,

8) Սահմանված կարգով տնօրինում է Կենտրոնին հատկացված ֆինանսական միջոցները:

35. Կենտրոնի տնօրենն արձակում է հրամաններ, տալիս է հրահանգներ, որոնք պարտադիր են կենտրոնի աշխատողների և սովորողների համար:

36. Կենտրոնի գիտական խորհրդում կայացած ընտրության արդյունքների հիման վրա Կենտրոնի տնօրենին պաշտոնում նշանակում է ԵՊՀ ռեկտորը:

37. Կենտրոնի տնօրենը կարող է ունենալ տեղակալ(ներ), որոնց տնօրենի ներկայացմամբ նշանակում է ԵՊՀ ռեկտորը:

38. Գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում կենտրոնին առնչվող ընթացիկ հարցերը քննարկվում և լուծվում են կենտրոնի տնօրինության նիստերում, որին մասնակցում են տնօրենը, տնօրենի տեղակալները, գիտական խորհրդի քարտուղարը, արհբյուրոյի և ուսանողական խորհրդի նախագահները: Տնօրինության նիստերն արձանագրվում են: Տնօրինության նիստերը հրավիրվում են տնօրենի առաջարկով:

IV. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

38. Ուեսուրս կենտրոն-գրադարանը ստեղծվել է ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի և ՀՀ-ում ԵՄ-ի պատվիրակության միջև համագործակցության շրջանակներում: Ուեսուրս կենտրոն-գրադարանի նպատակներն են՝ կրթական և գիտահետազոտական գործընթացներին նպաստելը, սովորողներին տեղեկատվական աղբյուրներով ապահովելը, գիտական հետազոտությունների իրականացման համար բարենպաստ միջավայր ստեղծելը: Ուեսուրս կենտրոն-գրադարանն իրականացնում է սույն կանոնադրությունից և իր նպատակներից բխող լիազորություններ:

39. Կենտրոնում կարող են գործել գիտահետազոտական խմբեր և գիտակրթական այլ ստորաբաժանումներ: